ճգնաւոր աբեղայ և զՅովհաննէս վարդապետ աբեղա. որ ի յորդորելն աւգնական եղեն և ի խազելն։ Եւ զկուսակրաւն աբեղայ զՍիմեոն Մեղրենցի որ ծաղկեաց եւ զթզթի կոկոզն և զպատուելի եղբայրս մեր զենովք քենց. զսիրելի ըստ հոգւոյ եղբայրս մեր զԱմինատինն եւ զծնողս իւր եւ ըստ հոգւոյ մայրերս մեր որ սպասաւորեն մեզ ըստ պիտոյից մարմնոյ...։ Եւ արդ ես Յովհաննէս աբեղայս եղի զգիրքս յիշատակ ի Ս. Փրկիչս յիշատակ ինձ և սմ. արեան մերձաւորաց իմոց։ Եւ զդէմս իմ յերկիր եղեալ պաղատիմ սպասաւորաց Ս. Փրկչի լուսազարդ տաճարիս. և սուրբ կափարիչ վիմիս, և սուրբ բանտիս, որ զգիրքս լաւ պահէք և խնամով պահէք և դուք ալ արժանաւորիք մասին ժառանգութեան սրբոցն ի լոյս....։» (ՄՁ. Թ. 67. Խաչ. Ցուց. էջ 189)։

ՅՈՀԱՆ ԱԲ.— ՌՄԺԵ (=1766) թուին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Ծաղիկաքաղ Մեկն. Սաղմոսաց Ն. Լամբրոնացւոյ ձեռագիրը (ՄՁ. Թ. 711). իրեն սեպհական այս ձեռագիրը իր մահուանէն յետոյ յիշատակուած է Ս. Յակոբի վանքին մատենադարանին։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲ. ՎԱՆԵՑԻ.— Մբ. 1606ին։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲ.— Մբ. 1701ին։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲ. ԿԱՐՆԵՑԻ.— Մբ. 1810ին Կարնոյ մէջ կը նահատակուին Դբունիկցի Վառվառէ կոյսը, անոր եղբայրը Գասպար Կարնեցի և Մարիամ Կարնեցին. ասոնց նահատակութեան ներկայ կ'ըլլան Կարնոյ նուիրակ Եւդոկիացի Ստեփանոս եպս. և Յովհաննէս աբ. այս վերջինը ոտանաւոր ներբողականով մը գրած է այս նահատակներուն պատմութիւնը, ինչպէս նաև այն երեք տապանագիրները, որոց առաջինը կը վերաբերի երեք նահատակներուն միանգամայն և վերջը ունի գրողին հետևեալ տողերը։

«Ի յաբեղայէ շնորհ ձայնելոյ.
Ի յաւելածուէ Սաղիմայ Սրբոյ
Գրի սա ի սէր քումդ կորովոյ
Ի փրկչականի հնգաւոն (=1810) թվոյ»

Երկրորդը յատուկ նուիրուած է Վառվառէ կուսին և տապանագրին վերջը կը գտնուի հետևեալը.